Դեկտեմբերի 20-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 26 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Մայրի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում» ծրագիրը.

«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից 2014 թվականին իրականացվող կողմից իրականացվող «Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում» ծրագիրը.

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Առողջության առաջնային պահպանում», «Ճանապարհաշինություն», «Մարդասիրական օգնություն», «Խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարելավում» և «Օգնություն դպրոցներին, մանկապարտեզներին և համայնքային կենտրոններին» ծրագրերը.

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագիրը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Երեմյան խցերի և Գևորգյան հագևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճի համար վարագույրների պատրաստում և տեղադրում», «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի հարակից տարածքի բարեկարգում», «Ոսկյա և արծաթյա կազմերի պատրաստման աշխատանքների իրականացում», «Սևան քաղաքի եկեղեցու կառուցում», «Սևանի Վազգենյան դպրոցի սաների ուսումնակրթական պայմանների բարելավում», «Էօրնեկեան վարժարանի կառուցում», «Երեմյան խցերի հակասառեցման համակարգի տեղադրում», «Մայր Տաճարի վերանորոգում» և «Արշիլ Գորկու թանգարանին կից մետաղական ճաղաշարի, դարպասների և դռների տեղադրում» ծրագրերը.

«Ջերմիկ անկյուն» հիմնդրամի կողմից իրականացվող «Ջերմիկ անկյուն» խմբային տան ծրագիրը.

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագիրը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տանիքի վերանորոգում» ծրագիրը.

«Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագիրը.

«Արագիլ» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերարտադրողական բժշկությանը» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տասը համայնքների մանկապարտեզների տասը նախադպրոցական մասնագետների համար կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երեք դպրոցներում աշակերտական խորհուրդների կարողությունների զարգացում» և «Գավառի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի և Կարմիր գյուղի համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոցի մարզադաշտի մասնաշենքի տանիքների վերանորոգում» ծրագրերը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հումանիտար օգնություն սիրիահայ փախստականներին» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: